ԽՈՒՄԲ 2

87 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն ուղեւոր է համարվում**

1. Տրանսպորտային միջոցի սրահում (խցիկում) կամ տրանսպորտային միջոցի վրա գտնվող անձը՝ բացառությամբ վարորդի եւ վարել սովորեցնողի:
2. **Տրանսպորտային միջոցի սրահում (խցիկում) կամ տրանսպորտային միջոցի վրա գտնվող, ինչպես նաեւ տրանսպորտային միջոց նստող (բարձրացող) ու դրանից դուրս եկող (իջնող) անձը՝ բացառությամբ վարորդի եւ վարել սովորեցնողի:**

Պատ.՝ 2

---

2. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհի երթեւեկելի մաս է համարվում**

1. Ճանապարհի տարրը՝ նախատեսված տրանսպորտային միջոցների երթեւեկության համար:
2. **Ճանապարհի տարրը՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկության համար:**

Պատ.՝ 2

---

3. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «D» կարգի եւ «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել՝**

1. 18 տարին լրացած անձանց:
2. 19 տարին լրացած անձանց:
3. 20 տարին լրացած անձանց:
4. **21 տարին լրացած անձանց:**

Պատ.՝ 4

---

4. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտն է համարվում**

1. **Տրանսպորտային միջոցից դուրս՝ ճանապարհի վրա գտնվող անձը՝ բացառությամբ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնելու իրավասություն ունեցող եւ օրենսդրությամբ սահմանված կարգով այդ աշխատանքներն իրականացնող անձը:**
2. Տրանսպորտային միջոցից դուրս՝ ճանապարհի վրա գտնվող, այդ թվում՝ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնելու իրավասություն ունեցող եւ օրենսդրությամբ սահմանված կարգով այդ աշխատանքներն իրականացնող անձը:

Պատ.՝ 1

---

5. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի գործնական վարման սկզբնական ուսուցումը իրականացվում է**

1. Բնակավայրերից դուրս՝ ճանապարհներին՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցների երթեւեկության ինտենսիվությունը:
2. **Փակ հրապարակում կամ ավտոդրոմում:**
3. Ցանկացած ճանապարհին (բացառությամբ ավտոմայրուղիների)՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցների երթեւեկության ինտենսիվությունը:

Պատ.՝ 2

---

6. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մերձակա տարածքից ելքը դեպի ճանապարհ համարվու՞մ է արդյոք խաչմերուկ:**

1. **Չի համարվում**
2. Համարվում է

Պատ.՝ 1

---

7. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «B», «C» եւ «D» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական ունեցող անձանց թույլատրվում է դրանք վարել նաեւ կցորդներով, եթե կցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում**

1. **750 կիլոգրամը:**
2. 800 կիլոգրամը:
3. 1000 կիլոգրամը:

Պատ.՝ 1

---

8. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկադրված կանգառ է համարվում**

1. Երթեւեկության ընդհատումը՝ կապված լուսացույցի արգելող ազդանշանի անսպասելի միացման հետ:
2. Երթեւեկության ընդհատումը՝ կապված ճանապարհին գոյացած խցանման հետ:
3. Տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի (ուղեւորի) ֆիզիկական եւ (կամ) հոգեկան վիճակով եւ (կամ) բեռի փոխադրմամբ պայմանավորված՝ վտանգի կամ ճանապարհին ի հայտ եկած այլ խոչընդոտի պատճառով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը:
4. **Թվարկած բոլոր դեպքերը:**

Պատ.՝ 4

---

9. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անբավարար տեսանելիություն է համարվում**

1. Ճանապարհի տեսանելիության հեռավորությունը՝ օրվա մութ ժամանակ:
2. Ճանապարհի տեսանելիության հեռավորությունը բնակավայրերում՝ երթեւեկելի մասի արհեստական լուսավորվածության բացակայության պայմաններում:
3. **Մառախուղի, անձրևի, ձյունաթափի եւ (կամ) ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման համար այլ անբարենպաստ եղանակի պայմաններում ճանապարհի տեսանելիությունը եւ (կամ) մինչեւ 300 մետր տեսանելիության հեռավորությունը:**

Պատ.՝ 3

---

10. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կանգառ է համարվում

1. **Մինչև 5 րոպե կամ ուղեւորի նստելու, իջնելու եւ (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը:**
2. 5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը, եթե դա կապված չէ ուղեւորների նստեցման, իջեցման կամ տրանսպորտային միջոցի բեռնման, բեռնաթափման հետ:

Պատ.՝ 1

---

11. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է համարվում

1. **Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղևորներ եւ (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս):**
2. Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղեւորներ եւ (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս), ինչպես նաեւ թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլը:

Պատ.՝ 1

---

12. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կցորդ (կիսակցորդ) է համարվում

1. Կոշտ կցիչով քարշակվող ցանկացած մեխանիկական տրանսպորտային միջոցը:
2. **Շարժիչով չկահավորված տրանսպորտային միջոցը, որը նախատեսված է մեխանիկական տրանսպորտային միջոցով շարժման մեջ դրվելու և դրա կազմում որպես մեկ ամբողջություն երթեւեկելու համար (ներառյալ՝ հատուկ կցորդը):**

Պատ.՝ 2

---

13. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ճանապարհներին սահմանվում է

1. **Աջակողմյան երթեւեկություն:**
2. Ձախակողմյան երթեւեկություն:

Պատ.՝ 1

---

14. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կայանում է համարվում

1. 5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը, եթե դա կապված չէ ուղևորների նստեցման, իջեցման կամ տրանսպորտային միջոցի բեռնման, բեռնաթափման հետ:
2. **5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը, բացառությամբ ճանապարհային երթեւեկության այլ մասնակցի կամ որևէ արգելքի հետ ընդհարումը կանխելու, ուղեւորի նստելու, իջնելու եւ (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու, ինչպես նաև օրեսդրությամբ նախատեսված այլ դեպքերի:**

Պատ.՝ 2

---

15. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված անձանց «D» կարգի և «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել

1. 18 տարին լրացած անձանց:
2. **19 տարին լրացած անձանց:**
3. 20 տարին լրացած անձանց:
4. 21 տարին լրացած անձանց:

Պատ.՝ 2

---

16. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի ձեռք բերման օրվանից ի՞նչ ժամկետում այն պետք է ներկայացվի պետական գրանցման՝ Ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական բաժին:

1. **15 օրվա ընթացքում**
2. 10 օրվա ընթացքում
3. 20 օրվա ընթացքում

Պատ.՝ 1

---

17. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային երթևեկությանը մասնակցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին վիճակում պահպանելու համար պատասխանատվություն կրում է

1. **Տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ օգտագործողը:**
2. Տրանսպորտային միջոցը վաճառած կազմակերպությունը:
3. Տրանսպորտային միջոցի՝ վերջին տարեկան տեխնիկական զննությունն իրականացրած կազմակերպությունը:
4. Թվարկած բոլոր անձինք և կազմակերպությունները:

Պատ.՝ 1

---

18. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երթևեկությունը սկսելուց առաջ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ստուգել

1. Արգելակային համակարգի և ղեկային կառավարման սարքինությունը:
2. Անվադողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության համապատասխանությունը սահմանված նորմերին:
3. **Բոլոր թվարկածները:**

Պատ.՝ 3

---

19. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է օժանդակելու նպատակով տրամադրել տրանսպորտային միջոցը

1. Ոստիկանության ծառայողներին՝ շտապ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց բժշկական հաստատություն տեղափոխելու համար:
2. Բուժաշխատողներին, որոնք բուժօգնություն ցույց տալու համար մեկնում են համընթաց ուղղությամբ (վարորդի համաձայնությամբ):
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

20. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունենալու դեպքում**

1. անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը:
2. միացնել վթարային լուսային ազդանշանը:
3. չտեղաշարժել պատահարի հետ կապված առարկաները:
4. **կատարել թվարկած բոլոր գործողությունները:**

Պատ.՝ 4

---

21. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է իր մոտ ունենալ**

1. **Տվյալ կարգի տրանսպորտային միջոցը վարելու վարորդական վկայականը եւ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերը կամ ՀՀ տարածքում նաև դրանց թվային տարբերակները:**
2. Լիազորագիր՝ այլ անձին պատկանող տրանսպորտային միջոցը վարելու դեպքում:
3. Թվարկած բոլոր փաստաթղթերը:

Պատ.՝ 1

---

22. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երթևեկության գոտի է համարվում**

1. երթեւեկելի մասի գծանշված երկայնական գոտին, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների՝ մեկ շարքով երթեւեկության համար:
2. **երթեւեկելի մասի գծանշված կամ չգծանշված երկայնական գոտին, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների՝ մեկ շարքով երթևեկության համար:**

Պատ.՝ 2

---

23. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թույլատրելի առավելագույն զանգված է համարվում**

1. Լրակազմված եւ լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգվածը:
2. **Վարորդով, ուղեւորներով եւ բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգվածը:**

Պատ.՝ 2

---

24. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորող է համարվում**

1. **Ճանապարհային երթեւեկությունը կարգավորելու իրավասություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով այդ կարգավորումն իրականացնող անձը:**
2. Երթևեկության ցանկացած մասնակից (վարորդ, ուղևոր կամ հետիոտն), որը անհրաժեշտություն առաջանալու դեպքում կատարում է կարգավորող գործողություններ:
3. Թվարկած բոլոր անձինք:

Պատ.՝ 1

---

25. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոց վարել սովորեցնողը**

1. **Հավասարեցվում է վարորդին:**
2. Չի հավասարեցվում վարորդին:

Պատ.՝ 1

---

26. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վթարային իրադրություն է համարվում**

1. Երթևեկության մասնակցի գործողության և (կամ) անգործության հետևանքով առաջացած իրավիճակը, որի ժամանակ ստեղծվում է ճանապարհատրանսպորտային պատահարի իրական վտանգ:
2. **Երթևեկության մասնակցի և (կամ) կարգավորողի գործողության և (կամ) անգործության հետևանքով առաջացած իրավիճակը, որի ժամանակ ստեղծվում է ճանապարհատրանսպորտային պատահարի իրական վտանգ:**

Պատ.՝ 2

---

27. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրվա մութ ժամանակ է համարվում**

1. Աշնանը և ձմռանը՝ երեկոյան ժամը 20.00-ից մինչև առավոտյան ժամը 8.00-ը, գարնանը և ամռանը՝ երեկոյան ժամը 22.00-ից մինչև առավոտյան ժամը 6.00-ն ընկած ժամանակահատվածը:
2. **Մթնշաղի վերջի և աղջամուղջի սկզբի միջև ընկած ժամանակահատվածը:**
3. Արեգակնային լուսավորության բացակայության ժամանակահատվածը:

Պատ.՝ 2

---

28. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոբուս է համարվում՝**

1. **Ուղևորների համար նախատեսված 8-ից ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը:**
2. Ուղևորների համար նախատեսված 8 և ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը:

Պատ.՝ 1

---

29. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտներին են հավասարեցվում**

1. շարժիչ ունեցող հաշմանդամային սայլակով՝ հետիոտնի արագությամբ տեղաշարժվող հաշմանդամները:
2. Հեծանիվ, մոպեդ կամ մոտոցիկլ տանող անձինք:
3. **Բոլոր թվարկած անձինք:**

Պատ.՝ 3

---

30. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը ծագում է**

1. Ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական բաժնում տրանսպորտային միջոց վարելու գործնական քննությունը դրական հանձնելու պահից:
2. **Վարորդական իրավունքի վկայական ստանալու պահից:**

Պատ.՝ 2

---

31. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազգային վարորդական վկայականը տրվում է**

1. 5 տարի ժամկետով:
2. **10 տարի ժամկետով:**
3. 20 տարի ժամկետով
4. Անժամկետ:

Պատ.՝ 2

---

32. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ միջազգային վարորդական վկայականը տրվում է**

1. 1 տարի ժամկետով:
2. **3 տարի ժամկետով:**
3. 5 տարի ժամկետով:
4. Անժամկետ:

Պատ.՝ 2

---

33. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարորդի թեկնածու կարող է դառնալ (բացառությամբ «AM» ենթակարգի տրանսպորտային միջոցի վարորդի թեկնածուի)**

1. 15 տարին լրացած անձը:
2. 16 տարին լրացած անձը:
3. **17 տարին լրացած անձը:**

Պատ.՝ 3

---

34. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կանգառ է համարվում**

1. Տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը՝ կապված ուղեւորի պահանջի հետ:
2. 5 րոպեից ավելի ժամանակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը, եթե դա կապված չէ ուղեւորների նստեցման, իջեցման կամ տրանսպորտային միջոցի բեռնման, բեռնաթափման հետ:
3. **Մինչեւ 5 րոպե կամ ուղեւորի նստելու, իջնելու եւ (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը:**

Պատ.՝ 3

---

35. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է համարվում՝**

1. Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս), ինչպես նաև թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլը:
2. **Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս):**
3. Զբոսաշրջային երթուղով շարժվող, ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը:

Պատ.՝ 2

---

36. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն զանգված է համարվում**

1. Լրակազմված եւ լիցքավորված տրանսպորտային միջոցի առավելագույն զանգվածը:
2. **Վարորդով, ուղեւորներով եւ բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգվածը, որն արտադրող կազմակերպությունը սահմանել է որպես առավելագույն թույլատրելի:**
3. Վարորդով, ուղեւորներով եւ բեռով բեռնված տրանսպորտային միջոցի զանգվածը, որն արտադրող կազմակերպությունը սահմանել է որպես առավելագույն թույլատրելի:

Պատ.՝ 2

---

37. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «B», «C», «D» կարգերի եւ «C1», «D1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձանց թույլատրվում է դրանք վարել նաեւ կցորդներով, եթե կցորդի առավելագույն թույլատրելի զանգվածը**

1. 950 կիլոգրամ է:
2. 850 կիլոգրամ է:
3. **750 կիլոգրամ է:**

Պատ.՝ 3

---

38. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի կանգառի կետ է համարվում՝**

1. **Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի երթուղու որոշակի հատվածում ուղևորների նստեցման-իջեցման համար նախատեսված և համապատասխան ճանապարհային նշաններով կահավորված վայր:**
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի երթուղու որոշակի հատվածում ուղևորների նստեցման-իջեցման համար նախատեսված վայր:

Պատ.՝ 1

---

39. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «D» կարգի և «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել այն անձանց, ովքեր ունեն՝**

1. **«B» կամ «C» կարգի կամ «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական և լրացել է նրանց 21 տարին:**
2. «B» կարգի կամ «B1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական և լրացել է նրանց 18 տարին:
3. «AB» կարգերի կամ «A1», «B1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական և լրացել է նրանց 18 տարին:
4. «B» կամ «C» կարգի կամ «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական և լրացել է նրանց 20 տարին:

Պատ.՝ 1

---

40. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «D», «DE» կարգերի, «D1» և «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական իրավունքի վկայական կարող է տրվել՝**

1. 19 տարին լրացած անձանց:
2. 20 տարին լրացած անձանց:
3. **21 տարին լրացած անձանց:**
4. 22 տարին լրացած անձանց:

Պատ.՝ 3

---

41. **Հողային ծածկույթով ճանապարհից դուրս գալով՝ ասֆալտբետոնե ծածկույթ ունեցող ճանապարհը**



1. **պետք է համարենք գլխավոր ճանապարհ:**
2. պետք է համարենք մեզ հավասարազոր ճանապարհ:

Պատ.՝ 1

---

42. **Քանի՞ երթևեկության գոտի կա այս երթևեկելի մասում:**



1. Մեկ
2. **Երկու**
3. Երեք

Պատ.՝ 2

---

43. **Թույլատրվու՞մ է ընթանալ երթևեկելի մասի կենտրոնով նշված լայնության պայմաններում:**



1. Այո
2. Այո, երբ հանդիպակաց երթևեկությունը բացակայում է
3. **Ոչ**

Պատ.՝ 3

---

44. **Նշվածներից ո՞ր անշարժ օբյեկտը արգելք չի հանդիսանում:**

1. Երթևեկելի մասի ծածկույթի վնասվածքը
2. Կողմնակի առարկան
3. Անսարք կամ անշարժ ավտոմեքենան
4. **Խցանման պատճառով կանգ առած ավտոմեքենան**

Պատ.՝ 4

---

45. **Ճանապարհի մաս հանդիսանում են արդյո՞ք մայթը կամ կողնակները:**

1. **Այո**
2. Միայն կողնակը
3. Ոչ

Պատ.՝ 1

---

46. Քանի՞ երթևեկելի մասեր ունի այս ճանապարհը:



1. Մեկ
2. **Երկու**
3. Չորս

Պատ.՝ 2

47. Քանի՞ խաչմերուկ կա այս նկարում:



1. **Մեկ**
2. Երկու
3. Չորս

Պատ.՝ 1

48. Քանի՞ երթևեկելի մասերի հատում կա այս խաչմերուկում:



1. Մեկ
2. **Երկու**

Պատ.՝ 2

49. **Քանի՞ երթևեկության գոտիներ ունի այս ճանապարհը:**



1. Երկու
2. **Չորս**

Պատ.՝ 2

50. **Ո՞ր նկարում ճանապարհն ունի բաժանարար գոտի:**





1. Միայն աջ
2. **Երկու նկարներում էլ**
3. Միայն ձախ

Պատ.՝ 2

51. **Հիշել ճանապարհն այլ տրանսպորտային միջոցներին նշանակում է, որ**

1. Վարորդը չպետք է շարունակի կամ վերսկսի երթևեկությունը կամ կատարի որևէ մանևր, եթե դա կարող է այլ տրանսպորտային միջոցների վարորդներին ստիպել փոխել շարժման ուղղությունը կամ արագությունը:
2. **Վարորդը չպետք է շարունակի կամ վերսկսի երթևեկությունը կամ կատարի որևէ մանևր, եթե դա կարող է այլ տրանսպորտային միջոցների վարորդներին ստիպել անսպասելի փոխել շարժման ուղղությունը կամ արագությունը**
3. Վարորդը պետք է անվերապահորեն կանգնեցնի տրանսպորտային միջոցը:

Պատ.՝ 2

52. **Ո՞ր նկարում է խաչմերուկ պատկերված:**





1. **Միայն ձախ**
2. Միայն աջ
3. Երկու նկարներում էլ

Պատ.՝ 1

---

53. **Քանի՞ երթևեկելի մասերի հատում կա խաչմերուկում:**



1. Մեկ
2. **Երկու**
3. Չորս

Պատ.՝ 2

---

54. **Վերադասավորում է համարվում**

1. Տրանսպորտային միջոցի զբաղեցրած երթևեկության գոտուց երթևեկության սկզբնական ուղղությունը պահպանելով դուրս գալը:
2. Տրանսպորտային միջոցի գծանշված երթևեկության գոտու սահմաններում զբաղեցրած շարքից, երթևեկության սկզբնական ուղղությունը պահպանելով դուրս գալը:
3. **Նշված երկու դեպքերն էլ:**

Պատ.՝ 3

---

55. **Շրջադարձ է համարվում**

1. Տրանսպորտային միջոցի՝ այլ ճանապարհ դուրս գալու նպատակով իրականացվող մանևրը:
2. **Տրանսպորտային միջոցի՝ այլ ճանապարհ կամ ճանապարհից մերձակա տարածք դուրս գալու նպատակով իրականացվող մանևրը:**

Պատ.՝ 2

---

56. Չետադարձ է համարվում

1. Տրանսպորտային միջոցը հանդիպակաց ուղղությամբ վարելը:
2. **Տրանսպորտային միջոցի շարժման ուղղությունը հանդիպակաց ուղղությամբ փոխելու նպատակով իրականացվող մանևրը:**

Պատ.՝ 2

---

57. Կողանցում է համարվում

1. **Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներից առաջ անցնելը՝ առանց զբաղեցրած գոտուց դուրս գալու:**
2. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ:

Պատ.՝ 1

---

58. Երթևեկության սկիզբ է համարվում

1. **Կանգառի կամ կայանման վայրից տրանսպորտային միջոցի շարժումն սկսելու պահը՝ կապված հարևան երթևեկության գոտի վերադասավորման հետ կամ առանց դրա:**
2. Կանգառի կամ կայանման վայրից տրանսպորտային միջոցի շարժումն սկսելու պահը՝ կապված հարևան երթևեկության գոտի վերադասավորման հետ:

Պատ.՝ 1

---

59. Մանևրում է համարվում

1. **տրանսպորտային միջոցի երթևեկության սկիզբ (կապված հարևան երթևեկության գոտի դուրս գալու հետ), վերադասավորում, երթևեկության ուղղության փոփոխություն, կանգառ (վերադասավորվելով) և հետընթաց կատարելը:**
2. տրանսպորտային միջոցի երթևեկության սկիզբ, վերադասավորում, երթևեկության ուղղության փոփոխություն, կանգառ և հետընթաց կատարելը:

Պատ.՝ 1

---

60. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բեռնատար ավտոմոբիլը

1. **իր կառուցվածքով և կահավորվածությամբ բեռների փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլն է:**
2. իր կառուցվածքով և կահավորվածությամբ բեռների փոխադրման համար նախատեսված 3.5 տոննայից ավել կշռող ավտոմոբիլն է:

Պատ.՝ 1

---

61. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բաժանարար գոտի է համարվում

1. ճանապարհի հարակից երթևեկելի մասերը բաժանող, կառուցվածքորեն առանձնացված տարրը, որը նախատեսված չէ տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկության կամ կանգառի համար:
2. **ճանապարհի հարակից երթևեկելի մասերը բաժանող, կառուցվածքորեն և (կամ) համապատասխան գծանշումով առանձնացված տարրը, որը նախատեսված չէ տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկության կամ կանգառի համար:**

Պատ.՝ 2

---

62. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոց է համարվում**

1. Ավտոմոբիլն ու մոտոցիկլը:
2. **Ճանապարհով մարդ, բեռ կամ վրան տեղադրված սարքավորում փոխադրելու համար նախատեսված սարքը:**

Պատ.՝ 2

---

63. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարորդին են հավասարեցվում**

1. **Ճանապարհով բեռնակիր և (կամ) հեծկան կենդանիներ կամ անասուններ քշող անձը:**
2. Բեռնակիր և (կամ) հեծկան կենդանիներ կամ անասուններ քշող անձը:

Պատ.՝ 1

---

64. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մայթ է համարվում**

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասին հարող ճանապարհի տարրը:
2. Օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասից որևէ եղանակով առանձնացված ճանապարհի տարրը:
3. **Նշված երկու դեպքերը:**

Պատ.՝ 3

---

65. **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոմոբիլ է համարվում**

1. **Ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար նախատեսված մեխանիկական տրանսպորտային միջոցը, բացառությամբ այնպիսի տրանսպորտային միջոցները, ինչպիսիք են գյուղատնտեսական տրակտորները, որոնց օգտագործումը ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար հանդիսանում է լրացուցիչ գործառույթ:**
2. Ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար նախատեսված մեխանիկական տրանսպորտային միջոցը, այդ թվում այնպիսի տրանսպորտային միջոցները, ինչպիսիք են գյուղատնտեսական տրակտորները, որոնց օգտագործումը ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար հանդիսանում է լրացուցիչ գործառույթ:

Պատ.՝ 1

---

66. **<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ «B,C» կարգերի և «D1» ենթակարգի վարորդական իրավունք ունեցող վարորդին թույլատրվու՞մ է վարել 17 նստատեղ ունեցող ավտոբուս:**

1. Թույլատրվում է:
2. **Չի թույլատրվում:**

Պատ.՝ 2

---

67. **<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցով երթևեկելիս ու՞մ է թույլատրվում անվտանգության գոտիով չամրակապվել:**

1. Հաշմանդամություն ունեցող վարորդին, որը երթևեկում է բնակավայրից դուրս
2. **Թափքի գունագրաֆիկ երանգավորում ունեցող ավտոմոբիլի վարորդին, որը երթևեկում է բնակավայրում**
3. Օպերատիվ ծառայողին, որը երթևեկում է բնակավայրից դուրս

Պատ.՝ 2

---

68. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ի՞նչ է արգելվում ավտոբուսի վարորդին երթևեկության ընթացքում:**

1. Կրել արևային ակնոցներ՝ անբավարար տեսանելիության պայմաններում
2. **Ծխել, տրանսպորտային միջոցից դուրս նետել իրեր և առարկաներ**
3. Լսել ռադիո կամ երաժշտություն ցածր ձայնով
4. Բոլոր նշվածները

Պատ.՝ 2

---

69. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ի՞նչ կարգի (կամ ենթակարգի) վարորդական իրավունքի վկայական պետք է ունենա վարորդը բեռնատար ավտոմեքենայով 9 մարդ փոխադրելու համար:**

1. **«D» կամ «DE» կարգերի կամ «D1» կամ «D1E» ենթակարգերի**
2. Միայն «C» կարգի կամ «C1» ենթակարգի, քանի որ տրանսպորտային միջոցը համարվում է բեռնատար

Պատ.՝ 1

---

70. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ էլեկտրամոբիլ է համարվում**

1. **ԷլեկտրաԷներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող մեկ կամ մի քանի էլեկտրաշարժիչով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ (բացառությամբ տրոլեյբուսի և տրամվայի):**
2. Էլեկտրաէներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող մեկ կամ մի քանի էլեկտրաշարժիչով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ (այդ թվում՝ տրոլեյբուս և տրամվայ):
3. Տրանսպորտային միջոց, որն ունի և էլեկտրական շարժիչ և ներքին այրման շարժիչ, որոնք կարող են աշխատել միաժամանակ կամ հաջորդաբար:

Պատ.՝ 1

---

71. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգություն է համարվում**

1. Պետական համապատասխան մարմինների և տեխնիկական միջոցների կողմից իրականացվող վերահսկողությանն ուղղված վթարների կանխումը:
2. Ճանապարհային երթևեկության կանոնների անվերապահ պահպանումը բոլոր վարորդների և հետիոտների կողմից:
3. **Ճանապարհատրանսպորտային պատահարներից երթևեկության մասնակիցների պաշտպանվածության վիճակը:**

Պատ.՝ 3

---

72. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոբուսի վարորդին արգելվում է**

1. Բացել ավտոբուսի դռները ընթացքի ժամանակ:
2. Բացել ավտոբուսի դռները կանգառի ժամանակ, եթե դա կխոչընդոտի երթևեկության մյուս մասնակիցներին:
3. **Վերոնշյալ երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

---

73. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին թույլատրվում է սպասել**

1. Այն տեղերում, որտեղ երկու ուղղությամբ տեսանելիությունը 100մ-ից ավել է:
2. **Բարձրացված սպասահարթակների վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ մայթերին և կողնակներին:**
3. Ցանկացած տեղում, որտեղ դրա անհրաժեշտությունն առկա է:
4. Թվարկված բոլոր տեղերում:

Պատ.՝ 2

---

74. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոբուսների ուղևորներին արգելվում է**

1. **Վարորդի ուշադրությունը շեղել տրանսպորտային միջոցի ղեկավարումից:**
2. Մինչև ավտոբուսի կանգնելը նստել կամ իջնել մայթի կամ կողնակի կողմից:
3. Նշված երկու դեպքում էլ :

Պատ.՝ 1

---

75. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոբուսի շահագործման համար պատասխանատու անձինք պարտավոր են**

1. **Կազմակերպել վարորդների աշխատանքը, պահպանել աշխատանքի և հանգստի ռեժիմը:**
2. Հետաքննել և բացահայտել պատահարի պատճառները, հայտնաբերել մեղավոր անձին:
3. Նշված երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

76. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային երթևեկություն է համարվում**

1. Տրանսպորտային միջոցով ճանապարհով մարդկանց տեղաշարժման և(կամ) բեռների փոխադրման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների համակարգը:
2. **Տրանսպորտային միջոցով կամ առանց դրա ճանապարհով մարդկանց տեղաշարժման և(կամ) բեռների փոխադրման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների համակարգը:**
3. Պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ, որն ուղղված է ճանապարհներով տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկության ապահովմանը:

Պատ.՝ 2

---

77. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտնային անցում է համարվում**

1. Ճանապարհային նշաններով և(կամ) գծանշումներով նշված և օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտների տեղաշարժվելու համար նախատեսված ճանապարհի խաչմերուկում գտնվող հատված:
2. **Ճանապարհային նշաններով և(կամ) գծանշումներով նշված և օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտների տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասի առանձնացված հատված:**

Պատ.՝ 2

---

78. **Ո՞րն է կոչվում «Երթևեկության ուղղության փոփոխություն»:**

1. Այլ ճանապարհ դուրս գալու նպատակով իրականացվող մանևրը
2. Այլ ճանապարհ կամ մերձակա տարածք դուրս գալու նպատակով իրականացվող մանևրը
3. **Նախկինում ընտրած երթևեկության ուղղության փոփոխություն (բացառությամբ հետընթացի)՝ կատարվող շրջադարձի կամ հետադարձի միջոցով**
4. Նախկինում ընտրած երթևեկության ուղղության փոփոխության (այդ թվում հետընթացի) կատարվող շրջադարձի կամ հետադարձի միջոցով

Պատ.՝ 3

---

79. **«Կազմակերպված տրանսպորտային շարասյուն» է համարվում**

1. **Մշտապես միացված լապտերներով միևնույն երթևեկության գոտիով անմիջապես իրար հետևից ընթացող առնվազն 3 մեխանիկական տրանսպորտային միջոցների խումբ, որն առջևից ուղեկցվում է կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներ միացրած տրանսպորտային միջոցով:**
2. Մշտապես միացված լապտերներով, միևնույն երթևեկության գոտիով անմիջապես իրար հետևից ընթացող առնվազն 2 մեխանիկական տրանսպորտային միջոցների խումբ, որն առջևից և հետևից ուղեկցվում է կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներ միացրած տրանսպորտային միջոցով:

Պատ.՝ 1

---

80. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ են համարվում**

1. **ճանապարհային նշաններ, լուսացույցներ, պաշտպանիչներ, գծանշումներ:**
2. տեսախցիկներ, արագաչափ սարքեր:
3. գովազդային վահանակներ և տեղեկատվական ցուցանակներ:

Պատ.՝ 1

---

81. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երբ է վարորդին արգելվում լքել իր տեղը կամ թողնել տրանսպորտային միջոցը**

1. Երբ տրանսպորտային միջոցը կայանված է թեքության վրա և անիվները չի թեքել դեպի մայթեզր:
2. **Եթե նրա կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները , որոնք բացառում են տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար շարժումը կամ դրա օգտագործումը իր բացակայության ժամանակ:**
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

82. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ միջազգային երթևեկություն է համարվում

1. Այլ երկրում գրանցված և անընդմեջ կամ մինչև երկու ամսվա ընդմիջումով և մինչև մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գտնվող տրանսպորտային միջոցի երթևեկությունը Հայաստանի Հանրապետությունում:
2. Հայաստանի Հանրապետության հաշվառման համարանիշերով տրանսպորտային միջոցի երթևեկությունը, որն իրականացնում է բեռնափոխադրում կամ ուղևորափոխադրում դեպի արտասահմանյան երկիր:

Պատ.՝ 1

---

83. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն թույլատրվում է «D» կարգով վարել ավելի քանի 8 նստատեղ ունեցող ավտոբուս կցորդված կցորդով , որի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 750կգ:

1. Թույլատրվում է
2. Չի թույլատրվում

Պատ.՝ 1

---

84. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն «D» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ ՀՀ ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարելու նաև

1. «B1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ:
2. «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ:

Պատ.՝ 2

---

85. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրոլեյբուս վարելու իրավունք տալու համար գործնական քննությունն ընդունում են

1. Ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական բաժինները:
2. տրոլեյբուս շահագործող կազմակերպությունները՝ տրանսպորտի և կապի բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Պատ.՝ 2

---

86. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թույլատրվո՞ւմ է «D1» ենթակարգի վարորդական վկայական ունեցող անձին վարել ավտոբուս , որը բացի վարորդի նստատեղից, ունի 8ից ավելի , բայց ոչ ավել, քան 16 նստատեղ:

1. Չի թույլատրվում
2. Թույլատրվում է

Պատ.՝ 2

---

87. **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թույլատրվո՞ւմ է «D1» ենթակարգի վարորդական վկայականով վարել 15 նստատեղով ավտոբուս՝ կցորդված 800կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով:**

1. Թույլատրվում է
2. **Չի թույլատրվում**
3. Թույլատրվում է, եթե կցորդը դատարկ է

Պատ.՝ 2